

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

20 դեկտեմբերի 2018 թվականի N 1509-Ն

ԹԱՐԳՄԱՆՉԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել թարգմանչի որակավորման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանն ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դիմումի դեպքում՝ թարգմանիչների որակավորման ստուգման համար ներկայացնել համապատասխան փորձագետների թեկնածությունները:

3. Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 2-ի "Նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տալու կարգը հաստատելու մասին" N 193 որոշմամբ սահմանված կարգով որակավորման ստուգումն անցնելու մասին տեղեկանք ստացած թարգմանիչները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և առանց որակավորման ստուգում անցնելու՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում ստանալ որակավորման վկայական:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ
ԿՈՂՄԻՑ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ

Հավելված

ՀՀ կառավարության

2018 թվականի դեկտեմբերի 20-ի

N 1509-Ն որոշման

ԿԱՐԳ

ԹԱՐԳՄԱՆՉԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

1. Պետության հաշվին թարգմանիչ ներգրավելու իրավասություն ունեցող մարմնի (այսուհետ՝ իրավասու մարմին) կողմից քաղաքացիական դատավարությունում որպես թարգմանիչ կարող է ներգրավվել միայն Հայաստանի Հանրապետության արդարադատության

նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից անցկացվող թարգմանչի որակավորման ստուգմանը մասնակցած և վկայական ունեցող անձը:

2. Որակավորման համար կարող են դիմել գործունակ այն անձինք, որոնք ունեն լեզվի իմացությունը հավաստող բարձրագույն կրթության կամ համապատասխան օտար լեզվին տիրապետելու մասին վկայական (դիպլոմ):

3. Դիմողը նախարարություն է ներկայացնում.

1) դիմում, որտեղ պետք է նշվեն՝

ա. դիմողի անունը, ազգանունը և հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում դրա առկայության դեպքում),

բ. այն լեզուն (լեզուները), որով (որոնցով) դիմողն իրականացնելու է թարգմանությունը,

գ. դիմողի բնակության և գործունեության վայրերը, հեռախոսահամարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն (դրանց առկայության դեպքում).

2) 2 գունավոր լուսանկար՝ 4 x 6 չափսի.

3) անձը հաստատող փաստաթուղթ.

4) բարձրագույն կրթության կամ համապատասխան լեզվին տիրապետելու մասին վկայականների (դիպլոմների) պատճենները.

5) պետական տուրքի և աշխատանքի ստուգման համար վճարը կատարված լինելը հավաստող փաստաթղթերը:

4. Սույն կարգի 3-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերում նշված փաստաթղթերից կազմված՝ դիմողների անձնական գործերը վերցվում են հաշվառման և պահվում նախարարությունում:

5. Որակավորման ստուգումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի (այսուհետ՝ նախարար) կողմից ստեղծված հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով):

6. Թարգմանչի՝ արտասահմանում ստացած որակավորումը համարժեք է Հայաստանի Հանրապետությունում ստացած որակավորմանը:

7. Հանձնաժողովը՝

1) կազմակերպում է դիմողների ստուգման աշխատանքները.

2) ընտրում է թարգմանության համար նախատեսվող տեքստերը, որոնք ենթակա չեն հրապարակման.

3) որոշում է ստուգման վայրը, ժամանակը և դրա մասին հայտնում դիմողներին.

4) կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքները և կարգավորում բողոքարկման հանձնաժողովի գործունեությանն առնչվող հարցերը.

5) քննում է դիմողների բողոքները՝ կապված ստուգման կազմակերպման հետ.

6) տալիս է ստուգման կազմակերպման հետ կապված այլ եզրակացություններ.

7) իրականացնում է սույն կարգով սահմանված այլ գործառույթներ:

8. Դիմողների որակավորումը որոշելու համար ստուգվում են հայերենին և համապատասխան օտար լեզվին (լեզուներին) տիրապետելու նրանց գիտելիքները:

9. Ստուգումները պարտադիր կազմակերպվում են առնվազն տարեկան մեկ անգամ՝ նախարարի հրամանով:

10. Ոչ ուշ, քան ստուգումն անցկացնելուց քսան աշխատանքային օր առաջ նախարարությունը հրապարակում է հայտարարություն որակավորման ստուգում անցկացնելու մասին: Հայտարարությունը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am պաշտոնական ինտերնետային կայքում և նախարարության www.moj.am պաշտոնական ինտերնետային կայքում:

11. Դիմումների ներկայացման վերջնաժամկետը սահմանում է հանձնաժողովը, սակայն սահմանված վերջնաժամկետը չի կարող ավելի ուշ լինել, քան ստուգումն անցկացնելուց տասը աշխատանքային օր առաջ:

12. Ստուգման անցկացման օրվա, ժամի, տեղի և եղանակի մասին դիմողին պատշաճ կերպով տեղեկացվում է ստուգումից առնվազն հինգ աշխատանքային օր առաջ՝ դիմումում նշված էլեկտրոնային հասցեով:

13. Ստուգումն անցկացվում է դռնբաց:

14. Ստուգումն անցկացվում է գրավոր՝ ձեռագիր կամ համակարգչային տեխնիկայի կիրառմամբ: Դիմողի գիտելիքների ստուգման նպատակով՝ նրան թարգմանության համար տրվում են հայերեն և համապատասխան օտար լեզուներով տեքստեր: Դիմողն իրավունք ունի թարգմանությունները կատարելիս օգտվելու բառարաններից և համակարգչային տեխնիկայից՝ առանց համացանցից օգտվելու հնարավորության:

15. Թարգմանությունների ճշտությունն ստուգում են նախարարության "Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն" պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից առաջադրված՝ համապատասխան լեզվին տիրապետելու մասին փաստաթուղթ ունեցող մասնագետների ցանկից հանձնաժողովի կողմից ընտրված փորձագետները: Փորձագետի բացակայության դեպքում՝ նախարարությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր դիմում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն՝ թարգմանությունների ճշտությունն ստուգելու նպատակով փորձագետների թեկնածուներ տրամադրելու համար: Նախարարությունները 3 աշխատանքային օրվա ընթացքում գրությամբ ներկայացնում են փորձագետների թեկնածուներ:

16. Հայաստանի Հանրապետությունում որոշակի լեզվի թարգմանչի բացակայության դեպքում՝ նախարարի թույլտվությամբ կարող է անցկացվել նշված լեզվի ստուգում:

17. Հայաստանի Հանրապետությունում որոշակի լեզվի փորձագետի բացակայության դեպքում՝ տվյալ գործի շրջանակներում դիմողին հանձնաժողովի կողմից կարող է տրվել տեղեկանք՝ հիմք ընդունելով դիմողի կողմից ներկայացված համապատասխան լեզվին տիրապետելու մասին փաստաթղթերը:

18. Փորձագետների աշխատանքի դիմաց վճարում են դիմողները՝ յուրաքանչյուրն իր աշխատանքի ստուգման համար 10000 դրամ: Ստուգմանը մասնակցելուց առաջ դիմորդներին տրամադրվում է հաշվեհամար, որին փոխանցվում է գումարը:

19. Փորձագետներին թարգմանություններն ուղարկվում են անանուն:

20. Ստուգման արդյունքները գնահատում է փորձագետը: Ստուգման արդյունքները գնահատվում են 20 միավոր համակարգով: Դրական են համարվում 17 և բարձր միավորները:

21. Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 2 միավորով: Յուրաքանչյուր էական սխալի դեպքում գնահատականից պակասեցվում է 1 միավոր: Յուրաքանչյուր ոչ էական սխալի դեպքում պակասեցվում է 0.5 միավոր: Էական են համարվում այն սխալները, այդ թվում՝ բառերի կամ նախադասությունների բացթողումները, որոնք կհանգեցնեն տեքստի բովանդակային փոփոխության կամ տարրնկալման, քերականական, կետադրական, տեքստի ընկալման վրա ազդող շարահյուսական սխալների:

22. Ստուգումն իրականացվում է քննության անցկացմանը հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում:

23. Ստուգումների արդյունքների մասին դիմողը էլեկտրոնային հասցեով իրազեկվում է ոչ ուշ, քան ստուգման արդյունքը նախարարություն մուտք լինելու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

24. Ստուգմանը չներկայացած դիմողները զրկվում են տվյալ ստուգմանը մասնակցելու իրավունքից: Նրանք իրավունք ունեն մասնակցելու հաջորդ ստուգմանը:

25. Ստուգմանը մասնակցելուց հրաժարված դիմողներին վերադարձվում են նրանց կողմից աշխատանքի ստուգման համար կատարված վճարը և ներկայացված փաստաթղթերը՝ բացի դիմումից:

26. Ստուգման արդյունքները կարող են բողոքարկման հանձնաժողով բողոքարկվել ստուգման արդյունքների ստացումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում: Բողոքարկման հանձնաժողովը ձևավորվում է նախարարի հրամանով:

27. Բողոքարկման հանձնաժողովն իրավունք չունի իջեցնելու դիմողի գնահատականը:

28. Եթե բողոքարկման հանձնաժողովը բավարարում է դիմողի բողոքը, ապա դիմողի ստացած միավորները համապատասխանաբար ավելացվում են՝ հաշվի առնելով բողոքարկման հանձնաժողովի եզրակացությունը:

29. Դրական միավորներ ստացած անձանց ստուգման արդյունքը նախարարությունում մուտքագրվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում նախարարության կողմից տրվում է որակավորման վկայական (այսուհետ՝ վկայական (Ձև 1):

30. Վկայական ստացած անձը պարտավորվում է, իրավասու մարմնի կողմից որպես թարգմանիչ ներգրավվելու մասին որոշման դեպքում, մասնակցել վարույթին և պատշաճ կատարել իր պարտականությունները: Իր պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում՝ անձը պարտավոր է ողջամիտ ժամկետում այդ մասին հայտնել իրավասու մարմնին:

31. Վկայականում նշվում են՝

ա) վկայական տվող մարմնի անվանումը.

բ) վկայականի համարը.

գ) վկայականը տալու օրը, ամիսը, տարեթիվը.

դ) ստուգում անցած անձի անունը, ազգանունը և հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում դրա առկայության դեպքում).

ե) այն լեզուն, որով վկայական ստացած անձն իրավունք ունի կատարելու թարգմանությունները:

32. Վկայականի վրա փակցվում է ստուգում անցած անձի լուսանկարը: Վկայականը վավերացվում է նախարարի ստորագրությամբ և նախարարության կնիքով:

33. Վկայականը չի կարող օգտագործվել այլ նպատակով, որի մասին նշում է կատարվում վկայականում:

34. Նախարարության կողմից վարվում է վկայական ստացած անձանց էլեկտրոնային գրանցամատյան, որտեղ պետք է նշվեն՝

1) վկայականի համարը.

2) վկայականը տալու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը.

3) վկայական ստացած անձանց ազգանունը, անունը և հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում դրա առկայության դեպքում).

4) այն լեզուն (լեզուները), որով (որոնցով) վկայական ստացած անձն իրավունք ունի կատարելու թարգմանություններ.

5) վկայական ստացած անձի բնակության և գործունեության վայրերը.

6) տեղեկություններ վկայականի վերաձևակերպման և գործողության դադարեցման մասին:

35. Վկայականը տրվում է մեկ օրինակով: Դրա կորստի (կորցնելու, ոչնչանալու և այլն) կամ ոչ պիտանի դառնալու դեպքում՝ անձը վկայականի կրկնօրինակ ստանալու նպատակով դիմում է ներկայացնում նախարարություն:

36. Նախարարությունը վկայականի կրկնօրինակը դիմողին տալիս է իրեն դիմելու պահից՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

37. Վկայականի կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է "Կրկնօրինակ" նշագրումը:

38. Վկայական ստացած անձի անվան, ազգանվան փոփոխման դեպքում՝ նա պարտավոր է այդ փոփոխության կատարման օրվանից սկսած երկու աշխատանքային օրվա ընթացքում դիմել նախարարություն՝ վկայականում համապատասխան փոփոխություն կատարելու կամ նոր վկայական տալու համար:

39. Յուրաքանչյուր լեզվից որակավորման ստուգում անցնելու դեպքում՝ թարգմանչին տրվում է նոր վկայական:

40. Վկայականը տրվում է անժամկետ:

41. Վկայական ստացած անձանց ցանկը, այն լեզուն (լեզուները), որով (որոնցով) վկայական ստացած անձն իրավունք ունի կատարելու թարգմանություններ, վերջինիս գործունեության վայրը, վարույթում ներգրավված լինելու մասին նշումը, ինչպես նաև սույն կետով նախատեսված տեղեկությունների փոփոխությունները հրապարակվում են նախարարության պաշտոնական կայքէջում:

42. Վկայական չստացած անձը նոր ստուգում անցնելու համար կարող է դիմել սույն կարգին համապատասխան:

43. Վկայականի գործողությունը դադարեցվում է նախարարի հրամանով՝ հաշվի առնելով նախարարի կողմից ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը՝ միայն այն դեպքում, երբ՝

1) իրավասու մարմնի միջնորդությամբ պարտականությունների կատարման անհնարինության հանգամանքի բացակայության պայմաններում թարգմանիչը հրաժարվել է կատարել իր պարտականությունները:

2) առկա է տվյալ գործով վարույթին մասնակցած անձի (այսուհետ՝ շահագրգիռ անձ) դիմումն այն մասին, որ վկայական ստացած անձը օրինական ուժի մեջ մտած դատական ակտով մեղավոր է ճանաչվել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար:

3) առկա է անձի դիմումը՝ իր վկայականի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ:

44. Սույն կարգի 43-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում հանձնաժողովը դիմումը կամ միջնորդությունը քննարկում և համապատասխան եզրակացությունը կայացնում է այն ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում: Սույն կարգի 43-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ հանձնաժողովը դիմումը քննարկում և համապատասխան եզրակացությունը կայացնում է անհապաղ: Նախարարը համապատասխան հրամաններն ընդունում է սույն կետով նախատեսված եզրակացությունները ստանալուց հետո անհապաղ:

45. Բացառությամբ սույն կարգի 43-րդ կետի 2-րդ ենթակետի՝ անձը կարող է կրկին դիմել և ընդհանուր կարգով մասնակցել որակավորման ստուգումներին: Սույն կարգի 43-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ անձը որակավորման ստուգմանը կարող է մասնակցել դատվածությունը մարվելու կամ հանվելու պահից:

46. Շահագրգիռ անձի միջնորդությամբ՝ վկայականի գործողությունը նախարարի հրամանով կասեցվում է՝ հաշվի առնելով նախարարի կողմից ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը, եթե շահագրգիռ անձի մասնակցությամբ վարույթի կապակցությամբ վկայական ստացած անձի նկատմամբ հարուցված է քրեական գործ:

47. Սույն կարգի 43-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում՝ վկայական ստացած անձին պատշաճ կերպով իրազեկում են վկայականի գործողության դադարեցման վերաբերյալ հարցի քննարկման մասին՝ քննարկումից ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օր առաջ՝ նրան տեղեկացնելով քննարկման վայրի (հասցեի), օրվա ու ժամի մասին:

48. Վկայական ստացած անձի չմասնակցելը հարցի քննարկմանը հիմք չէ հարցը չքննարկելու կամ այն մերժելու համար, եթե վկայական ստացած անձը չի խնդրել քննարկումն անցկացնել այլ ժամկետներում, որը կարող է բավարարվել, եթե նա հարգելի պատճառով չի կարող մասնակցել քննարկմանը: Նշված հարցը քննարկվում է դռնբաց:

49. Վկայականի գործողության դադարեցման դեպքում՝ նախարարություն է վերադարձվում վկայականը, որը կցվում է ստուգում անցած անձի անձնական գործին:

50. Վկայականի գործողության դադարեցման մասին հրամանը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Ձև 1

(ՀՀ զինանշան)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | |

ՎԿԱՅԱԿԱՆ N- _____ | |

(անուն, ազգանուն) | |

_____.
(անձնագիր՝ _____)

Թարգմանիչ

_____ լեզու

Վկայականը չի կարող օգտագործվել այլ նպատակով:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար՝

ՏՐՎԱԾ՝ __.__.20__թ.